ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 18–20-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄՈՍԿՎԱ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024թ. նոյեմբերի 18–20-ը:

4. **Հրավիրող կողմը.**

ՌԴ տրանսպորտի նախարարություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցելու 2024թ. հոկտեմբերի 19–20-ը կայացած «Ռուսաստանի տրանսպորտ» ամենամյա միջոցառման շրջանակներում հետևյալ հանդիպումներին.

- Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի 8-րդ նիստին,
- ԱՊՀ համակարգող տրանսպորտային խորհրդակցության կոմիտեի (ԿՏՀ ՀՊԳ) 44-րդ նիստին,
- «ԱՊՀ+» Տրանսպորտային համագործակցություն». փոխկապակցվածություն, դիմակայունություն, արդյունավետություն» լիագումար քննարկմանը,
- «Արդյունավետ տրանսպորտային համակարգ. Հիմնական տարրեր» լիագումար քննարկմանը:

6. **Քննարկված թեմաները.**

ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի հավանությանն արժանացան ընդհանուր տրանսպորտային շուկայի զարգացմանն ուղղված անդամ պետությունների առաջարկները, մասնավորապես՝ ԵԱՏՄ երկրներում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրականացման ժամանակ e-CMR էլեկտրոնային միջազգային տրանսպորտային բեռնագրերի կիրառման պիլոտային նախագծի վերաբերյալ: Տվյալ նախագծի իրականացումը կնպաստի բեռնափոխադրումների թվայնացմանը: Միության անդամ պետությունների ներկայացուցիչները քննարկեցին 2024–2025թթ. համար նախատեսված ճանապարհային քարտեզի իրականացման կարևորությունը:

«ԱՊՀ+» Տրանսպորտային համագործակցություն». փոխկապակցվածություն, դիմակայունություն, արդյունավետություն» լիագումար նիստին մասնակիցները ներկայացրեցին իրենց երկրներում ազգային տրանսպորտային համակարգերի ռազմավարական զարգացման տեսլականը:

ԱՊՀ համակարգող տրանսպորտային խորհրդակցության կոմիտեի (ՀՏՀ ՀՊԳ) 44-րդ նիստի ընթացքում ներկայացվեցին անցողիկ տարվա գործունեության արդյունքները, մանրամասն քննարկվեցին մարմնի թարմացված կանոնակարգը:

«Ռուսաստանի տրանսպորտ» ամենամյա միջոցառման շրջանակներում մասնակցել եմ նաև «Արդյունավետ տրանսպորտային համակարգ. Հիմնական տարրեր» լիագումար նիստին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«ԱՊՀ+» Տրանսպորտային համագործակցություն». փոխկապակցվածություն, դիմակայունություն, արդյունավետություն» լիագումար նիստին հանդես եմ եկել ելույթով, որում անդրադարձ եմ կատարել Հայաստանում տրանսպորտի ոլորտում իրականացվող ծրագրերին, ինչպես նաև ներկայացրել եմ ՀՀ Կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

«Ռուսաստանի տրանսպորտ» միջոցառման շրջանակներում տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Թուրքմենստանի Նախարարների կաբինետի ներքո Տրանսպորտի և հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրենի տեղակալ Ալլագուլի Խուդայբերդիևի հետ: Քննարկվել են Թուրքմենստանի տարածքով բեռնափոխադրումների գործընթացի դյուրացման, ինչպես նաև փոխադրումների տոկոսադրույքի նվազեցման հարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԱՊՀ համակարգող տրանսպորտային խորհրդակցության կոմիտեի (ՀՏՀ ՀՊԳ) 44-րդ և ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի 8-րդ նիստերի ժամանակ ընդունվել են արձանագրություններով ներկայացված կետերը: Այլ փաստաթղթեր չեն ստորագրվել:

ԱՊՀ համակարգող տրանսպորտային խորհրդակցության կոմիտեի (ՀՏՀ ՀՊԳ) 44-րդ նիստի ընթացքում մի շարք աշխատակիցներին շնորհվեցին պատվոգրեր և շնորհակալագրեր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանձնարարվեց ներկայացնել ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի անդամներին արձանագրությունում սահմանված ժամկետներում Ղեկավարների խորհրդի 8-րդ նիստի արձանագրությամբ ամրագրված կետերի կատարումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

25.11.2024թ.